

ԱՌԱՋԻՆ ՏԵՐԵԻՔ

Հաղին լուսոյ դողդոջ փայլ
Պատուեց ամպոց սեւ մրուայլ,
Մեր դաշտերուն՝ հաղին ձին
Դարձոյց իրենց սեւութիւն.
Եւ դուք վակժոյժ ի վրթիթ
Գայք մեզ աչօրդ ի ժըպիտ.
Առաջին տերեւք,
Բարեւք ձեզ, բարեւք:

Դեռ երկընքին մեր ցըրաիկ
Ձեկաւ այցող ծիծառնիկ,
Դեռ սոխակին հեշտաւանդ,
Ձեռուն ծործորք արձագանդ,
Եւ դուք փութայք սիրալիր
Խընդից հրեշտակք ի յերկիր.
Առաջին տերեւք,
Բարեւք ձեզ, բարեւք:

Կանաչ երանգ ձեր փափկիկ,
Ձեւ եւ իրան ձեր մանրիկ,
Ո՛հ, աչքերուն մեր ծարաւ
Ի՛նչպէս անուշ փայլեցաւ.
Տըխուր ոգիք՝ ձեր տեսքին
Զըւարթանան ըսփոփին.
Առաջին տերեւք,
Բարեւք ձեզ, բարեւք:

Եկէք, եկէք մեր հովտաց
Շողալ իծոց մըթազգեաց,
Եկէք ծառոց մեր իդող
Գըլուխ ձըգել կանաչ քող.
Եկէք տըրտում՝ բընութեան
Նոր պաճուճել կերպարան.
Առաջին տերեւք,
Բարեւք ձեզ, բարեւք:

Եկէք, դարնան նորաբոյս
Ծագել վարդից արշալոյս,
Եկէք հրաւէր տալ առ սիր
Խաղալ ընդ ձեր խոսուպիք,
Ծաղկանցն ասէք քաղցրահոտ՝
Գան, ո՛հ, կարօտ եմք կարօտ.
Առաջին տերեւք,
Բարեւք ձեզ, բարեւք:

Եկէք, եկէք ո՛հ տերեւք,
Եկէք յուսոյ յանուշ թեւք
Մեր սիրելեաց տապանին
Ծածկել ըզհող ցըրտագին.
Ո՛հ այն ոսկերց անձկալի
Լերուք պըսակ ցողալի,
Առաջին տերեւք,
Ո՛վ հրեշտակաց թեւք: